ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ 2022

Բովանդակություն

Բովանդակություն 1

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր 2

Ֆինանսական դիրք 3

Վարկային պորտֆել և համեմատականներ 4

Տրամադրված վարկերի ծավալը 4

Տրամադրված վարկերի քանակը 4

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 6

Վարկերի կառավարում 7

Վերլուծական գործակիցներ 8

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2022թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել են 168.00 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Մարտի նկատմամբ նվազելով 3.2%-ով, իսկ 2022թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 0.6%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2022թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել է 127.55 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Մարտի նկատմամբ նվազելով 6.8%-ով, իսկ 2022թ. Փետրվարի նկատմամբ աճելով 1.9%-ով (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 54.25 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Մարտի նկատմամբ նվազելով 9.9%-ով, իսկ 2022թ.-ի Փետրվարի նկատմամբ աճելով 0.3%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2021-2022թթ. Մարտի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2022թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 9. 9 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 25.8%-ով, իսկ 2022թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 20.5%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2022թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 28,515 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 17.5%-ով, իսկ 2021թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 138.6%-ով (Գծ. 3):
- 2022թ.-ի Մարտ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 149,958 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2021թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 12.9%-ով, իսկ 2022թ. -ի Փետրվարի նկատմամբ աճել է 1.6%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022թ.-ի Մարտին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 346 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 851 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2021թ.-ի Մարտին կազմել են համապատասխանաբար՝ 655 և 794-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2022թ.-ի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 157 մասնաճյուղ, որը, համեմատած 2021թ.-ի Մարտի հետ, աճել է 2-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2022թ.-ի Մարտի դրությամբ ունեցել են 537 վարկային մասնագետ, որը, համեմատած 2021թ.-ի Մարտի հետ, նվազել է 22-ով:
- 2022թ.-ի Մարտին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 18.35 մլն դրամ, նախորդ ամսին՝ 15.20 մլն դրամ, իսկ 2021թ.-ի Մարտին այս ցուցանիշը կազմել է ևս 14.01 մլն դրամ (Գծ. 5):
- 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 237.53 մլն դրամ, նախորդ ամսվա 206.09 մլն դրամի և 2021թ.-ի Մարտին 244.81 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 1,542 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,706 մլն դրամ և 2021թ.-ի Մարտին՝ 3,502 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 56.0%-ով, իսկ 2022թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 9.6%-ով: 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.21%-ը, 2021թ.-ի Մարտին ևս կազմել է 2.56% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 3,189 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,367 մլն դրամ և 2021 թ.-ի Մարտին՝ 13,668 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 76. 7%-ով, իսկ 2022թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 5.3%: 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.50%-ը, 2021թ.-ի Մարտին՝ 9.99% (Գծ. 6):
- **Զուտ դուրսգրումներ:** 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 1,143 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,043 մլն դրամ և 2021թ.-ի Մարտին՝1,331 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2022թ.-ի Մարտին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 9.6%-ով, իսկ 2021թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 14.1%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Մարտի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.90%-ը, նախորդ ամսվա 0.94%-ի և 2021թ.-ի Մարտի 0.97%-ի համեմատ (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Մարտի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2022թ.-ի Մարտի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 75.9%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Մարտին կազմել է 78.8% (Գծ. 7):
- Սույն թվականի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 42.5%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 43%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Մարտին կազմել է 44.0% (Գծ. 7):
- 2022թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 32.3%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Մարտին կազմել է 34.7% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2022թ.-ի Մարտ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.10, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած

պարտավորությունները 2.0 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Մարտի համար կազմել է 1.88:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ



	Վարկային պորտֆել/ակտիվներ	Կապիտալ/վարկային պորտֆել	Կապիտալ/ակտիվներ
2021	78,8%	44,0%	34,7%
2022	75,9%	42,5%	32,3%


Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
30 000,0
28 000,0
26 000,0
24 000,0
22 000,0
20 000,0
18 000,0
16 000,0
14 000,0
12 000,0
10 000,0
8 000,0
6 000,0
4 000,0
2 000,0
-
11 952
10 851
10 332
10 875
13 481
12 261
16 944
20 824
21 788
26 110
23 094
24 271
28 515
Mar-21
Apr-21
May-21
Jun-21
Jul-21
Aug-21
Sep-21
Oct-21
Nov-21
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22


Ժամկետանց վարկերի դինամիկան 03/2021-03/2022
PAR 1-30 days
PAR more than 30 days
15 000 000
14 000 000
13 000 000
12 000 000
11 000 000
10 000 000
9 000 000
8 000 000
7 000 000
6 000 000
5 000 000
4 000 000
3 000 000
2 000 000
1 000 000
-
Mar-21
Apr-21
May-21
Jun-21
Jul-21
Aug-21
Sep-21
Oct-21
Nov-21
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22